Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-197-25.01.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-407-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11.1-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «կառուցվածքային հաստիքացուցակը» բառերը փոխարինել «կառուցվածքը եւ հաստիքացուցակը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի Գ խմբի «գլխավոր օպերլիազոր», Դ խմբի «ավագ օպերլիազոր» եւ «օպերլիազոր» բառերից առաջ լրացնել «տարածքային բաժնի» բառերը:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 17. Հարկային ծառայության մրցութային եւ ատեստավորման հանձնաժողովը՝

1. Սույն օրենքով սահմանված կարգով մրցույթներ եւ ատեստավորումներ անցկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվում է մրցութային եւ ատեստավորման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի անդամներին ներկայացվող չափանիշները, հանձնաժողովի կազմը, աշխատակարգը եւ անդամների թվաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ Հանձնաժողովի անհատական կազմը վերադաս հարկային մարմնի ղեկավարը:

2. Հանձնաժողովի նախագահը եւ անդամներն իրենց աշխատանքը Հանձնաժողովում համատեղում են իրենց զբաղեցրած պաշտոնների հետ:»:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1. 9-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«9. Ատեստավորումն անցկացվում է հետեւյալ եղանակներով՝

1) փաստաթղթային.
2) թեստավորման եւ հարցազրույցի միջոցով, իսկ վերադաս հարկային մարմնի օպերատիվ ստորաբաժանումներում ծառայություն անցնողների համար նաեւ ֆիզիկական պատրաստվածության, զենքի եւ հատուկ միջոցների տիրապետման գծով՝ ատեստավորման հանձնաժողովի սահմանած չափանիշներով և կարգով:»:

2. Լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 9.1-րդ մասով.

«9.1. Այն հարկային ծառայողները, որոնք ծառայողական դրական բնութագրի եւ նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում վերապատրաստման (ուսուցման) արդյունքների ընդանուր գումարով հավաքում են 80 եւ ավելի միավոր, ենթակա են փաստաթղթային ատեստավորման: Միավորների հաշվարկն իրականացվում է վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված կարգով:»:

3. Լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 9.2-րդ մասով.

«9.2. Փաստաթղթային ատեստավորումն անցկացվում է ծառայողական բնութագրի հիման վրա՝ հարցազրույցի միջոցով: Հարցազրույցն անցկացվում է հարկային ծառայության տվյալ պաշտոնի նկարագրի դրույթների շրջանակներում՝ նրանց գործնական կարողություններն ստուգելու նպատակով: Հանձնաժողովը փաստաթղթային ատեստավորման արդյունքի հիման վրա կայացնում է հետեւյալ եզրակացություններից մեկը եւ փաստաթղթային ատեստավորումն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում վերադաս հարկային մարմնի ղեկավարին.

1) շնորհել ավելի բարձր դասային կամ հատուկ կոչում.
2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.
3) ենթակա է ատեստավորման թեստավորման եւ հարցազրույցի միջոցով:»:

4. Լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 9.3-րդ մասով.

«9.3. Թեստավորման եւ հարցազրույցի միջոցով ատեստավորման ենթակա են այն հարկային ծառայողները, որոնք փաստաթղթային ատեստավորման ենթակա չեն կամ որոնց վերաբերյալ ատեստավորման հանձնաժողովն ընդունել է սույն հոդվածի 9.2-րդ մասի 3-րդ կետում նշված եզրակացությունը: Թեստերը հաստատում, հարցազրույցն անցկացնում եւ արդյունքները գնահատում է Հանձնաժողովը՝ սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր տարի հարկային ծառայողների առնվազն մեկ երրորդը ենթակա են պարտադիր վերապատրաստման:

2. Հարկային ծառայողի վերապատրաստումն իրականացվում է հարկային մարմնի կողմից սահմանված կարգով:»:

Հոդված 6. Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված կարգով հարկային ծառայողին դասային կոչման ներկայացնելը չի կարող հետաձգվել հարկային ծառայության անցնելուց կամ հերթական (արտահերթ) դասային կոչումն ստանալուց հետո.

1) հարկային ծառայության գլխավոր կոչումների համար՝ ավելի քան 3 տարի,
2) հարկային ծառայության ավագ կոչումների համար՝ ավելի քան 2 տարի:»:

Հոդված 7. Օրենքի 23.1-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Հարկային ծառայության առաջատար մյուս պաշտոններից վերադաս հարկային մարմնի ավագ հարկային տեսուչի, վերադաս հարկային մարմնի ավագ օպերլիազորի, վերադաս հարկային մարմնի առաջատար մասնագետի, քննիչի, հետաքննիչի, տարածքային հարկային տեսչության գլխավոր հարկային տեսուչի, տարածքային հարկային տեսչության գլխավոր մասնագետի, տարածքային բաժնի գլխավոր օպերլիազորի պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը հարկային ծառայության 1-ին դասի խորհրդականի կամ հարկային ծառայության կապիտանի կոչումն է:

7. Հարկային ծառայության վերադաս հարկային մարմնի հարկային տեսուչի, վերադաս հարկային մարմնի օպերլիազորի, վերադաս հարկային մարմնի 1-ին կարգի մասնագետի, տարածքային հարկային տեսչության ավագ հարկային տեսուչի, տարածքային հարկային տեսչության առաջատար մասնագետի, տարածքային բաժնի ավագ օպերլիազորի պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը հարկային ծառայության 2-րդ դասի խորհրդականի կամ հարկային ծառայության ավագ լեյտենանտի կոչումն է:»:

Հոդված 8. Օրենքի 23.1-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 8-րդ մասով՝

«8. Հարկային ծառայության կրտսեր մյուս պաշտոններին համապատասխանող հարկային ծառայության կոչումների վերին սահմանը հարկային ծառայության 3-րդ դասի խորհրդականի կամ հարկային ծառայության լեյտենանտի կոչումն է:»:

Հոդված 9. Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6) հատուկ եւ (կամ) դասային կոչման արտահերթ շնորհում,»:

Հոդված 10. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «հարկային մարմնի ղեկավարի լիազորած հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանման միջոցով» բառերը:

Հոդված 11. Օրենքի 43.1-րդ հոդվածի 5-րդ մասում «աշխատակարգը,» բառից հետո լրացնել «անհատական կազմը,» բառերով:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության կամ դիտողության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	1. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ օրենք/ 20-րդ հոդվածի 8-րդ մասի վերջին պարբերությունը, որի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել հարկային ծառայողի ատեստավորման արդյունքների վրա: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նման բնույթի պահանջ սահմանված է մի շարք օրենքներով, մասնավորապես՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով: Այդ առումով գտնում ենք, որ հիշյալ դրույթն ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտությունը չկա:	Առաջարկությունն ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
	2. 1) նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում «բովանդակության» բառը փոխարինել «բովանդակությամբ» բառով; Նույն առաջարկությունը վերաբերում է նաև նախագծի 8-րդ հոդվածին: 2) նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ կետով լրացվող 9.1-րդ մասի կետերի և պարբերությունների համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին: Նույն առաջարկությունը վերաբերում է նաև նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ կետով լրացվող 9.2-րդ մասի 2-րդ կետին և	Առաջարկություններն ընդունվել են	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

	վերջին պարբերությանը: 3) նախագծի 5-րդ հոդվածում «հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել» բառերը փոխարինել «հոդվածը շարադրել» բառերով: 4) նախագծի 11-րդ հոդվածում «պարբերությունում» բառը փոխարինել «մասում» բառով:		
ՀՀ ԱԺ պատգամավոր Մարտին Սարգսյան	1.Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքով սահմանված կարգով մրցույթներ և ատեստավորումներ անցկացնելու նպատակով ստեղծվում է մրցութային և ատեստավորման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմում բացի հանձնաժողովի նախագահից ընդգրկվում է տասներկու անդամ՝ առաջադրված Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշներով: Հանձնաժողովի աշխատակարգը և անդամների թվաքանակը սահմանում է ՀՀ կառավարությունը, իսկ անհատական կազմը հաստատում է վերադաս հարկային մարմնի ղեկավարը»:	Առաջարկությունը չի ընդունվել	1. Առաջարկությունում առկա են հակասող պահանջներ Հանձնաժողովի անդամների թվաքանակի վերաբերյալ՝ *«[Հանձնաժողովը] …բացի հանձնաժողովի նախագահից ընդգրկվում է տասներկու անդամ»* և *«Հանձնաժողովի… անդամների թվաքանակը սահմանում է ՀՀ կառավարությունը»*: 2. Օրինագծի նպատակներից է՝ հանել մաքսային և հարկային ծառայությունները կարգավորող օրենքներից այն դրույթները, որոնք խոչնդոտում են երկու ծառայությունների համար ՀՀ կառավարության կողմից միասնական հանձնաժողովի ձևավորման հնարավորությանը:
	2.Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածում ավելացնել նոր 3-րդ կետ հետևյալ բովանդակությամբ. «3. Հանձնաժողովի անդամների կազմում պետական մարմինների ներկայացուցիչներից բացի, ընդգրկվում են նաև ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ»:	Առաջարկությունը չի ընդունվել	Առաջարկվող մոտեցումն ընդունելի չէ հարկային և մաքսային ծառայությունների մասով՝ հաշվի առնելով, որ վերջիններս՝ մասնագիտական ոլորտներ են, և հանդիսանում են հատուկ պետական ծառայություններ: Մասնավորապես՝ 1) Հանձնաժողովի անդամները կազմում են մասնագիտական եզրակացություններ հարկային ծառայողների որակավորման աստիճանի վերաբերյալ, ինչը պահանջում է նեղ մասնագիտական և արդի գիտելիքներ, ինչպես նաև երկարամյա ծառայողական ստաժ: Քանի որ հասարակական կազմակերպությունների նեկայացուցիչների շրջանում նման պահանջներին համապատասխանող թեկնածուների բավարար ընտրության առկայությունը խնդրահարույց է, ապա առաջարկության արդյունավետ իրագործումը իրատեսական չէ. 2) Հարկային ծառայողների գործունեության անկողմնակալությունն ապահովելու նկատառումով՝ անհրաժեշտ է խուսափել որևէ

			հարկ վճարողին (այդ թվում՝ հասարակական կազմակերպությանը, դրա հիմնադիրներին, դրան անդամակցող կամ փոխկապակցված տնտեսվարող սուբյեկտներին), իրենց նկատմամբ հսկողություն իրականացնող կոնկրետ հարկային ծառայողների վրա ներազդելու հնարավորության տրամադրումից. 3) Եթե առաջարկությունն ուղղված է Հանձնաժողովի աշխատանքի թափանցիկության և հանրային հսկելիությանն ապահովմանը, ապա որպես արդյունավետ և ժամանակակից լուծում առաջարկվում է՝ ապահովել բոլոր շահագրգռված հասարակական կազմակերպություններին Հանձնաժողովի ատեստավորումների և մրցույթների ընթացքին ազատորեն դիտելու հնարավորությամբ, օրինակ՝ առցանց ռեժիմում: Վերջինիս ենթակա է ամրագրման Հանձնաժողովի աշխատակարգում և կիրականացվի օրինագծից բխող օրենսդրական ակտերի մշակման ժամանակ: